ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սույն թվականի հոկտեմբերի 1-ին Թբիլիսիում տեղի ունեցավ «Գլոբալիզացիա և Քաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային համաժողովը, որին մասնակցում էին ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Հնդկաստանից, Հարավային Կովկասի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրներից:

Սիմպոզիումի աշխատանքներին, որպես Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, իր գործուն մասնակցությունն է բերել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Համաժողովին Սրբազան Հայրը հանդես է եկել «Գլոբալիզացիա, քաղաքակրթություն և բարոյականություն» զեկուցմամբ:

Համաժողովի ընթացքում մասնակիցները կազմել և ստորագրել են մի ուղերձ, որը ներկայացնում ենք ստորև.

ՀԱՆՈՒՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ, ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Մենք՝ «Գլոբալիզացիա և Քաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային համաժողովի մասնակիցներս, հավաքված Թբիլիսիում Նորին Սրբություն Իլիա Բ Համայն Վրաց Պատրիարքի նախաձեռնությամբ և Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլու հրավերով, դիմում ենք բոլոր նրանց, ովքեր անհանգստացած են աշխարհում բռնության և թշնամանքի աճից:

Մենք հայտնում ենք մեր անհանգստությունն այն փաստի նկատմամբ, որ բռնության և թշնամանքի արտահայտությունները վնասում են միլիոնավոր մարդկանց ու նորանոր տարածաշրջաններ են գրավում աշխարհում՝ խթանելով հարձակողական ֆանատիզմին, միջազգային և միջկրոնական հակամարտություններին և քաղաքացիական պատերազմներին: Ողջ աշխարհին սպառնացող չարիքը մեզանից պահանջում է միաբանություն և դիմադրողականություն: Մենք կիսում ենք բռնությանը զոհ դարձածների տառապանքը և նրանց հայտնում մեր ցավակցությունը: Մենք կորցրել ենք հոգու խաղաղությունը Բեսլանից հետո:

Մենք առաջինը չենք, որ խոսում ենք այս մասին: Դարեր շարունակ մարդկությունն արարել է արժեքների ընդհանուր համակարգ: Մեր խնդիրն է սկսել երկխոսություն, վերացնել թշնամանքը և հակառակությունը բանակցությունների և փոխըմբռնման միջոցով: Եթե մենք հաջողենք արանում, մեզանից հետո եկող սերունդներին կթողնենք անցին և անուրանալի ժառանգություն:

Մենք դիմում ենք բարի կամքի բոլոր մարդկանց՝ ընդդեմ բռնության իրենց ջանքերը բազմապատկելու ու միավորելու և բանակցությունների ու երկխոսութ-

յան միջոցով հակառակությունների և հակամարտությունների խաղաղ հաշտեցման կոչով: Նկատի առնելով ապագա սերունդների նկատմամբ մեր պատասխանատվությունը՝ կոչ ենք անում նրանց ձեռնպահ մնալ նոր պատերազմներից, ինչպես և արտահայտված է ՄԱԿ-ի կողմից. մենք պետք է բացառենք պատերազմը և ահաբեկչությունը մարդկային հասարակության կյանքից:

Մենք կոչ ենք հղում հասարակական, կրոնական և մշակութային գործիչներին՝ ի գործ դնելու իրենց ողջ գաղափարական և բարոյական հեղինակությունը՝ հասրտարելու համար հանդուրժողականության և փոխըմբռնման ոգի տարբեր աշխարհայացք և կրոնական պատկանելություն ունեցող ժողովուրդների միջև, պաշտպանելու իրավունքները, արժանապատվությունը և յուրաքանչյուր մարդու կյանքը:

Մենք համոզված ենք, որ գիտակից հասարակության՝ բարի կամքի բոլոր մարդկանց միաբանությունը կհաղթահարի սասարկացած համաշխարհային բռնությունը և թշնամանքը:

Հանուն այս նպատակների Թբիլիսիի «Գլոբալիզացիա և Քաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային սիմպոզիումը կոչ է անում բոլոր պետությունների և կառավարությունների ղեկավարներին, ՄԱԿ-ին և ՅՈՒՆԵՍԿՕ-ին, մյուս միջազգային կազմակերպություններին, բոլոր մակարդակների պաշտոնյաներին, բոլոր երկրների խորհրդարանների պատգամավորներին՝ աջակցելու նախաձեռնությանը և միջոցներ ձեռք առնելու քաղաքակրթությունների երկխոսությունը հնարավոր դարձնելու համար:

Համարում ենք այժմեական և հրատապ «Գլոբալիզացիա և Քաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային սիմպոզիումը՝ գումարված Թբիլիսիում՝ Վրաստանում, որը հայտնի է փոխհանդուրժողականության իր երկարամյա հարուստ ավանդներով, ինչպես նաև վրացական և մոտ ու հեռավոր երկրների մշակույթների սերտ կապերով՝ նկատի առնելով Վրաստանի դերն ու նշանակությունը Կովկասում խաղաղության կերտման և զարգացման գործընթացում՝ իբրև քաղաքակրթությունների խաչմերուկ:

Մենք նպատակահարմար ենք համարում դիմել Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլուն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Քոյչիրո Մացուրային Թբիլիսիում «Քաղաքակրթությունների Երկխոսություն» Միջազգային Կովկասյան Կենտրոն հասարտելու առաջարկով, ինչը անկասկած լուրջ ներդրում կլինի Կովկասում ապահով, արդար և մարդկային խաղաղություն հասարտելու գործընթացում:

«Գլոբալիզացիա և Քաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային համաժողովի մասնակիցներ

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին